<<ԱՐԱԲԿԻՐ>> ՄԱՆԿԱԿԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ ՓԲԸ
**CHILDREN POLICLINIK "ARABKIR"**

ՀՀ, Երևան 12, Փափազյան 32, հեռ. 26-11-31,
e – mail arabkir-mankakan@rambler.ru

N 209

«14» հուլիսի 2014թ.

*ՇՀԱՊՁԲ-11/4 ծածկագրով դեղորայքի և պատվաստանյութերի գնման շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին*

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Արաբկիր մանկական» պոլիկլինիկա ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԱՄՊ-ՇՀԱՊՁԲ-11/4-2»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Փափազյան 32 հասցեով, տնօրենի ընդունարան, մինչև գնային առաջարկներ պարունակող ծրարները բացվելու պահը:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ «Արաբկիր մանկական» պոլիկլինիկա ՓԲԸ -ի գնումների համակարգող Տ. Սարգսյանը (հեռ. 098-04-04-30):

Հայտերը կբացվեն 2014թ. հուլիսի 24-ին, ժամը 13:15-ին «Արաբկիր մանկական» պոլիկլինիկա ՓԲԸ-ի շենքում:

Գնման առարկա է հանդիսանում Հավելված 1-ի ներկայացված դեղորայքը /ներպոլիկլինիկական օգտագործման/:

Մատակարարման պայմաններն են՝ ընկերության կողմից պատվերի առաքում պատվերը ընդունելուց հետո երկու օրվա ընթացքում:

«Արաբկիր մանկական» պոլիկլինիկա ՓԲԸ-ի կարիքների համար՝ դեղորայքի (որոնք կազմված են 63 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) №1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված №5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված №6): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Միաժամանակ հայտնում ենք, որ «ԱՄՊ-ՇՀԱՊՁԲ-11/4-2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջների համաձայն՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն

անհրաժեշտ է ներկայացնել *ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով* /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

*Հարգանքով*

*Ա. Նարգիզյան*